ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՌԱՋԱՐԿՈՎ, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, 1961 թվականի սեպտեմբերի 23-ի իր նիստում, որոշում ընդունեց հրավիրելու Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանին որպես անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի։ Հայկազուն սրբազանը սիրով ընդառաջեց սույն հրավերին։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգևշնորհ Տ. Եղիշե արեղա Գարաջյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանում կազմակերպվեց քարոզի երեկո։ Գ լսարանի չորս ուսանողները՝ տիրացուներ Ժիրայր Կոնսուզյանը, Կարպիս Սերայդարյանը, Արշակ Տերտերյանը և Զոհրապ Շամլյանը, ի ներկայության քարոզախոսության դասախոս Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռիս միաբանության, կարդացին իրենց պատրաստած քարոզները։

Քարոզների ընթերցումից հետո տեղի ունեցավ երաժշտական երեկո։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգևշնորհ Տ. Մեսրոպ արեղա Պայլանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 15-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «տօն ծննդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին»։ Մայր Տաճարի ձախակողմյան դասում դտնվող Ս. Հովհաննես Մկրտչի խորանի վրա պատարագեց հոգևշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգևշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, ընթերանալով «Որ դատել կանձն իւր՝ կորուսցէ դնա, և որ կորուսցէ կանձն իւր վասն իմ՝ գտցէ դնա»։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նիստ, ուր քննարկվեցին նոր վեհարանի վերանորոգման հետ կապված շինարարական հարցեր։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 25-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ Մայր Տաճարի երգեցիկ խմբի մենակատար Սվետլանա Զաքարյանի համերգը, դաշնակի ընկերակցությամբ տիկին Սահակունու։

Համերգին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և վանքի պաշտոնեությունը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 28-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը, քարոզի բնաբան ունենալով «Եթէ մարդկանց և հրեշտակաց լեզուս խօսիցիմ և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ, ՇԱԲԱԹԻ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովը իր հերթական նիստում քննարկեց Նոր Վեհարանի ներքին ձևավորման, Օշականի Ս. Մեսրոպի անվան եկեղեցու ներքին ձևավորման և նկարազարդման հարցերն ու Մայր Տաճարի նոր լուսամուտների նախագծերը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 9-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի ունեցավ ռուսինահայ ծանոթ ուսուցիչ և գրող Զարեհ Պարոնյանի (Բլբուլ) տարելիցի առթիվ Հոգևոր Հանգստյան պաշտոն։

Արարողության նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 10-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Սրբոյն Թադէոսի առաքելոյն մերոյ և Սանդխտոյ կուսինաց։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը։

Օրվա տոնի առթիվ փակ էր Հոգևոր Ճեմարանը։

✡✡✡

ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը, ընարան ունենալով «Փութաջիր զանձն քո ընտիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեանն (Բ Տիմոթ. Ա 15)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։